ԺԱՄԱՑԱԿ
ՀԱՅԴԷՍ ՀԱՅՐԵՆԱՒՒԷՐ

10 ԱՊՐԻԼ Գ· ՏԱՐԻ 1865 ԹԻՒ 60

Կը հրատարակուի երկու անգամ մը ըստ ցանկութեան։
Բաժանորդագրութիւնը գինը տրուելոյն Յ արծաթ Սեբաստիոյ ղուրուշ։
Մեն մի թիւը 4 դրուշ։
Դուրս երկրէն ուրիշ ծանրոց ծախքը աշխատողին վրայ է։
Տարածութիւնները տարոյն առաջին նուագն է։
Տարածութեան տեղն է Մխիթարեան տպարան։

Դուրսերը գործակալներն են.
ՋՄՒՌՆԻՈՅ· Հայրապետ աղա Շահվերդեան։
ՆԻԿՈՄԻԴԻԱ· Մելէոն աղա վահէ Տ· Աբրահամեան,
ՏՐԱՊԻԶՈՆ· Խալապոտ աղա Եղմասեան։
ԿԵՐԻՆ· Պետրոս աղա Օյնեցի Վերաբեռուլ Ընկերութեան ներկայ։
ԹԵՈՒՏՍԱ· Մ· Պետրոս աղա Մ· Յովհաննէսեան։
ՀԱԼԷՊ· Յովհաննէս աղա Քիւրքճեանօֆ։

ԸՍԵՂՆԱՐԴ ՄԸՐՑՈՒՄՆ

ՆԱՄԱԿ ԺԵ·

ՀՆԱՂԱՆԴՈՒԹԻՒՆ, ԵՒ ՄԵՂՔ.

(Շարունակութիւն 58 թիւէն)

Սիրելի քոյր իմ

Տալն բարեկարգ դաստիարակութեանը ամենահարկաւոր և անհրաժեշտ առաջին դասերէն մէկն է հնազանդութիւնը. և մէյ մ'որ ծնողաց հնազանդ ըլլայ ոգին, ալ այնուհետև Աստուծոյ ալ հնազանդելու կը նախապատրաստուի։ Ձ'անա՛ ուրեմն որ քու կամքդ որդւոյդ օրէնք համարել տաս. և ասկից ալ պզտիկ հասակէն սկսելու ես ընել։ Մեծ քաղցրութեամբ անաչառ ու հաստատուն կերպ մը բանեցնես, մանկիկը շատ դիւրաւ կը սովորի քեզ հնազանդելու. բայց քիչ մը յամպաղութեամբ մեծ արգելքներ ու դժուարութիւններ կը պատճառէ ձեռնարկութեանդ մէջ։ Շատ հարկաւոր է որ մէկը տղայոց կամքը նուաճէ. բայց ինձ մնայ նէ կ'ըսեմ որ մէկը չարիք մը դարմանելէն աւելի անոր առջևն առնելու պարտաւոր է. որովհետև շատ ծնողք իրենց գաշտելի ընթացքին ատենկ պարագաներու մէջ շատ անգամ իրենց տղայոց վրայ ընդդիմութեան ոգի մը կը գրգռեն և կը բորբոքեցնեն, զոր շատ դժուար կ'ըլլայ ալ այնուհետև հանդարտեցնել և խաղաղել։

Ուրեմն ծնողք կամ տղայոց խնամակալները ատենկ դժպատեհութեան և անկարգու-

թեանց տեղի չտալու համար պէտք է նախ հաստատուն կերպով ինքզինքին քննեն և ըզնիեն թէ արդեօք առանց ոգալու՝ իշխելու համարմը կայ իրենց վրայ, այն հակումը՝ որ շատ բնական է մարդկային սեռին։ Ընդհակառակը եթէ ընդքայր իմ այս բանիս. քանզի երբ տղաք կնայ որ քու նպատակդ ուրիշ բան չէ, բայց մի միայն բացարձակ իր վրայ իշխել. երբ տղաք մանաւանդ լաւ մը թէ մի միայն կը ջանաս որ քու կամքդ ըլլայ, ալ մի՛ կարծեր որ տղայդ դաստիարակութիւն պիտի առնէ, քեզի մոխիկ ընելով. քանզի իւր անկարութեան համար է որ կը հնազանդի քեզ. և այս օրինակաւոր անոր սրտին մէջ ալ իշխելու փափաքը կ'արծարծես, որ հասակին հետ կ'աճի և կը զօրանայ։ Ընթէ ծնողք տղայոց քով ինքզինքնուն տէր ըլլան, ու բարկութեան ու այլ կրքոց տեղի չտան, այս անտեղութիւնը շատ քիչ անգամ կը պատահի։

Աստի ամէն բանէ առաջ ջանա՝ որ ինքզինքդ տալեցնես միշտ հանդարտ մնալու ու ամենևին չխռովելու. և աստ իմացընես տղուդ, ու վերահասու ըլլայ որ միմիայն ղինքը սիրելուդ ու իրեն ազեկութեանը համար քու իշխանութիւնդ կը բանեցնես. և թէ ամենայն հաճութեամբ իւր փափաքը պիտի կատարէիր եթէ քու դաստղութեանդ համաձայն ըլլար։ Պէտք չէ ամենևին տղուդ բան ըսես քու կենցաղավարութեանդ և բոլոր նպատակներուդ վրայօք. մանաւանդ թէ ասկէ խորշէ ու զգուշացիր ալ։ Այլ որ տղաք անմիջապէս հնազանդի քեզ. երբ իրեն բան մ'ըսես, առանց պատճառն իսկ քեզի հարցընելու։ «Այդ ինչու

համար մայր իմ. — ինչո՞ւ համար դուռը չբա-նամ. — ինչո՞ւ համար վար չ'երթամ. — ինչո՞ւ համար վեր չ'ելլեմ.» այսպիսի հարցումնե-րու ինձ մնայ նէ ամենևին պատասխանել հարկ չէ։ Տղան իւրաքանչիւր օր և ժամ տեսած բաներէն պէտք է աղէկ մը համոզուի որ քու-լորը կամքերդ ու փափագներդ ընդ-լուդ և իրեն բարիքը ուզելուդ համար են. հետևաբար բացարձակ կերպով իրեն ըսէ՛ որ անվայել բան է իրեն հրամայած կամ արգե-լած բանիդ պատճառն հարցընէ։ Տղան քու վրադ այսպիսի գաղափար մ'առնելէն վերջը ալ անմիջապես քեզ կը հնազանդի, փոքրիկ նը-չան մը տալուդ պես ալ։

Տղուն ամենափոքր հասակէն սկսեալ՝ հնա-զանդութիւն պահանջէ անկէ. և ամենևին որ և իցէ անհնազանդութիւն մը չտեսնելու չզարնես, և երբեք չբարկանաս տղայոց վրայ առանց առիթի մէջ։ Օրինակի համար եթէ ը-սես տղադ որ պառկելու չգնացած քեզի «գի-շեր բարի» ըսէ, և ինքն իւր չարութենէն չուզէ ըսել, մի՛ տիպեր զինքը, որ իւր չու-զած բառերը արտասանէ. և մանաւանդ եր-բէք չ'հայես զինքը, ու իրեն անուշեղէն և ու-րիշ որևիցէ բան մը խոստանաս, քու կամքդ կատարել տալու համար։ Բանզի այն ատեն տղան աւելի քեզի հետ առուտուր ընելու կը սովրեցընես, քան թէ քեզ հնազանդելու։ Այս պարագային մէջ ձգէ տղան որ առանց «գի-շեր բարի» ըսելու երթայ պառկի. և եթէ կարելի է ջանա՛ տհաճութիւնդ երբէք երևան չհանես։ Բայց վերջը երբ անկողնին երթայ, կրնաս իրեն քաղցրութեամբ ըսել թէ «շատ կը ցաւիմ որ ինձ անհնազանդ դանուեցար», ու հետևեալ օրուան համար փոքրիկ պատիժ մը հնարես իրեն։ Յիշէ միշտ որ աղէկ բան չէ առանց հարկի տղայոց շատ մը բաներ պատ-ուիրել ու սահմանելը, և դանոնք տղատ ձգել շատ անգամ որ իրենց մանաւանդ կարծեցին ու գիւտերուն հետևին։ Օգուշացիր ուրեմն որ չըլլայ թէ շատ մը անպէտ յանձնարարու-թիւններով տղան վհատես։

Իսկ այսու ամենայնիւ, երբ բան մ'ըսես, տղան անպատճառ միշտ հնազանդելու է։ Ու-երբ բանի մը մէջ քեզ ընդդիմանալ կամ խօս-քերդ ընել ջանայ, այն ատեն փոքրիկ պատիժ մը սահմանելու ես իրեն. ըստ օրում երբ տեսնէ թէ ամենափոքր բանին անգամ աչք չես գոցեր, այն ատեն աւելի նախապատիւ կը սեպէ քեզ հնազանդիլը. և անհնազանդու-թեան հետևանքները լաւ կը գիտնայ ու կը ձանձրէ։ Միշտ նայելու ես որ հաստատուն ու անփոփոխ ըլլաս ամեն կենցաղավարութեանդ մէջ. քանզի ինչ կամք որ ունենաս, տղայդ ալ անմիջապես նայնը պիտի ունենայ։ Օնոդք պէտք չէ որ այնպիսի իշխանութիւն բանեցնեն իրենց տղայոց վրայ, ինչպէս երկրապործ մը որ և է կենդանւոյ վրայ։ Ընանկ կերպեր բռնե-լու է որ տղան ինքնիրեն համոզուի այն կեր-պով որ իր խիղճովն ղնւր կենցաղավարութի-նը դատապարտէ, և անխուսափ ու կամաւ ընդունի այն պատիժը իւր զանցառութեանը հա-մար։

Պարտական ենք մեծ զգուշութիւն բանե-ցընել, երբ հարկ սեպենք մեր տղայոց վախ տալու։ Երբ ատոնք աղէկ ընթացք չունե-նան, և մենք ալ պատշաճ վարկանինք զանոնք պատժելու, պէտք է անանկ կերպեր բանեցը-նենք որ իրենք իրենց յանցանքն աղէկ մը ճանչ-նան ու հասկնան, և ապա այն ատեն անաչառ զնրենք պատժենք։ Մակայն զգուշանանք սա սովորական սպառնալիքներէն «Չէքդ պիտի հանեմ» կամ, «երբ ըսէ հայրդ, քեզ հորը պիտի ձգէ». կամ «զքեզ պիտի խզդէ». և այլն և այլն։ Ընանկ խօսքեր երբէք չեն վայ-լեր բարի ծնողքներու բերաններուն. քանզի այս խօսքերուն գլխովին սուտ ըլլալէն զատ, տղայոց հպատակութեան և հնազանդու-թեան հիմունքն ալ կը տապալեն ու տակն ու վրայ կ'ընեն։

Ընանկով տղան միայն կը դնէ որ ծնողք նպատակ չունին իւ գործ դնելու սակս սակս բուռ սպառնալիքներին, և մանաւանդ փորձով տեսած ալ կ'ըլլան թէ ատոնք փուճ խօսքեր են. կ'զգայ նաև թէ երբեմն երբեմն կրնայ սուր ձայն մը կամ խիստ սպառնալիք մը ընել, բայց անոտրակայս պատժուելու չէ, վասն զի սպառնայողներն իւր մայրն կամ հայրն են։

Տղան իւր ծնողաց այս պժգալի ընթացքին և օրինակին նայելով, ոչ միայն սուտ ու խա-բեպ կը սովրի. այլև իւր շատ յոժարութեանն ու հակումնքը հետևիլ. որովհետև ինչպէս ը-սինք, աղէկ գիտէ որ իւր ծնողքն իրենց ը-րած բոլոր խիստ ու սղգու սպառնալիքները-վրէն հանգերձ՝ զանի չպիտի պատժեն. խակ ընդ-հակառակն եթէ իւրաքանչիւր սպառնալիք գործադրուելը, ու տղան պատժուելը առանց զանցառութեան, այն ատեն աւելի շատ նա-խադրութիւն պիտի բանեցնէր տղան և իւր միտքը դրած յանցանքէն պիտի խորշէր։ Օրինակի համար, մայր մը կ'արդիլէ տղուն դրիչներուն ու մելանին ձեռք չզարնելու. բայց անիկա ակամայ վիսերը անոր ձայնին։ Դարձեալ մայրը աւելի խիստ ու զօրաւոր ձայ-

նով ու բարկացեալ դեմքով մը կ'արգիլէ ոլորտն քալելով։ «Ո՛ւր խառնեցը ատանք՝ հօդ կ'ըլամ վերջը, — «եթէ մէյմ՝ալ ընես, քեզ պիտի ծեծեմ»։ Տղան գուցէ քիչ մը գոլայ և վայրկեանին մը չափ անոր հնազանդի, բայց սովհետև շատ անգամ լսած է մեհնոյն ըսպառնալիքները, ու շատ քիչ անգամ ատոնց կատարուիլը տեսած, դարձեալ կ'երթայ արգիլեալ բաներուն, ձեռքը կ'առնէ, ու կը խաղայ անոնց հետ։ Այն ատեն մայրը կը դանգատի թէ իւր ազաքը աղէկ կրթուած չէն, ու իրեն մտիկ չեն ըներ, ու չմտածեր խեղճը որ ինքն է նոյն իսկ պատճառը։ Բանդի մայրն եթէ իւ սկզբան անուշաս բայց քաղցր կերպով իրեն ոլորտն ըսեր թէ «մեր տեղին ու գրչենեորուն հետ մի խաղար, ու չըլլայ թէ ընես ատ բանը.» և եթէ հարկը պահանջէր, աւելցներ որ «խօսքըս մտիկ չընես նէ, քեզի սենեակէն դուրս պիտի ընեմ, կամ պատիժ մը պիտի տամ» ու այս ազդեցութիւնքն ի գործ դներ, ալ անհեղութիւն չէր յառաջ գար։

Շատերը կան որ տղոցմէ ծառայութիւն են ըզգած իրենց, տղաքնին յայտնի կերպով բամբասել ու չարախօսել ղոլորտնակ «Ատրիամը չամաչէ, ծոյլ և անգործ», «Յարութիւնը շատ ագահ է», «Կոհարիւնէն ալ անկիրթ է և անհնազանդ»։ Այս պակասութիւնէն պէտք է վերջին աստիճան զգուշանալ, ու խորհիլ, որ սովհետև ատանկ չարախօսութիւններով անկարելի է որ շատ ուշադրութիւնները ուղղին, մանաւանդ թէ ընդհակառակն տղայք աւելի կը չփանան ու կը խառնանան, երբ իրենց յանցանքն ու պակասութիւնները այսպէս ուրիշներուն յայտնուին։ Փորձառութիւնը կը պահանջէ որ մօրը կամ ծնողաց իշխանութիւնը աւելի գործով հաստատուի, քան թէ խօսքով ու համոզմամբ։

Մեր վճռայն ու գործադրութեան մէջ հաստատուն ու անփոփոխ պէտք է ըլլանք, և քաղցր ու հանդարտ՝ մեր կերպերուն ու բնաւորութեան մէջ։ Ծնողք կամ տղայոց քովը եղողները շատ անգամ այնչափ չափազանց կը խօսին, որ աւելի զղջայս կը խառվին։ Օրինակի համար, տղայ մը սովրած կ'ըլլայ բարկանալու և սատիկ լալու. ատանկ պարագայի մը մէջ թէպէտ մայրը անոր խրատներ ու յորդորներ տայ, տղան աւելի շատ կը խառվի ու չարիքը աւելի կը մեծնայ, ատանկ խառվ ժամանակ մէջ ամէն բան անօգուտ է։ Պայրը պէտք է որ ատանկ պարագայից մէջ նոյն ժամանակն ամենևին ձայն չհանէ, ու հանդարտ իւր գործերուն պարապի. և վերջը ղանի՝ մէկալ տղայոց տուած բաներուն մէկէն պզկէ, և աս վարմունքն կրկնապատիկ աւելի տղեցութիւն կ'ընէ տղուն վրայ, քանթէ հաղարաւոր ուրիշ խրատներ ու յորդորներ։

Դպրեսաններն ալ նման զգուշութեամբ պէտք է տրուին։ Կրթեալ տղայ մը համոր իւր դաստիարակաց կամ ծնողաց գոհունակութիւնը, բարեկամաց սէրը ու համարումը բաւական վարձքեր կը համարուին։

Երբեմն անկարելի է պատժոյ և վարձու վրայ կանոններ չընել։ Այս մասին մեր բուն նպատակին ալ պէտք է տարբեր ըլլայ տղոցն հասակին, բնաւորութեան, և յօժարութեանց համեմատ. սակայն միշտ պէտք է յիշենք թէ քան որուամ պատիժը ատուգիւ հաճելի բան մը չէ, և մի միայն տղան իւր մեղքերուն ուղղելու ու զանի հնազանդ ընելու յանգամանքին վրայ աղէկ մը ապահաւել տալու կը ծառայէ, պէտք չէ երբեք այնչափ խիստ ու շատ ըլլայ, այլ օրշափ հարկ է այս նպատակին համար։ և ծնողք կամ տղայոց վրայ բարձրագոյն իշխանութիւն ունեցողները միայն պատիժը պիտի տան, և այն ալ շատ քաղցր ու անխռով կերպով։

Օրնողք պարտական են մեծապէս ուշադիր ըլլալ ու զգուշանալ որ չըլլայ թէ գաւազանը անխարբեբար գործածեն, ու տղաքնին խստիւ ծեծեն, զանոնք մուրթ ատոլերկրելու աղերսու կամ սենեակներու և այլն մէջ փակեն. նա մանաւանդ զանոնք չվախցնեն անգոյ բաներով, օրինակի համար խալըմկներով ու ձիաւորներով և այլն և այլն։

Պայրը եթէ ատիպուի իւր տղան պատժել, կրնայ զանի քիչ մ'ատեն լուսաւոր սենեակի մը մէջ փակել, կամ զանի սեղանէ հանել և վերջապես իւր յանգստանց տխուր բնական հետևանքներն իրեն կրել տալ։ Օրինակի համար, եթէ տղան բարկութենէ ձեռքի խաղալիկովն իւր եղբօրը ղարնէ, խաղալիկը ձեռքէն առ քիչ մը ատեն։ Եթէ սեղանի վրայ անհամբերութենի ու որկրամոլութենի ցուցընէ, ամենէն վերջը կերակուր իր պնակին մէջ։

Եթէ ամէն բանի մէջ այս կերպով բանեցընելով քսւ վճիռներդ ու տպատնալիքներդ ձիշդ ու միակերպ ի գործ դնես, կրնաս դիւրաւ նպատակիդ հասնիլ, այն է ընտիր սկզբունքներ տալ տղոցդ. միւս կերպին գալով, չկարծես որ խիստ ու ծանր ծանր պատիժներով կրնաս բան մ'ընել։ Տղայ մը որ աղէկ գիտէ եղբօրը բան մ'ընելու ըլլայնէ մէկ քանորդի մը չափ պիտի բանտարկուի, այսպիսին աւելի քիչ հակում կ'ունենայ արդարև միևնոյն պակասութիւնն ու յանցանքը գործելու,

քանեմէ այն տղան որ միշտ սպառնալիքներ կը կրէ, սենեկի մէջ բանտարկուելու, քայց ա-ռանց անոնց գործադրութիւնը տեսնելու։

Ա դիտողութիւնն ալ արժան կը համա-րիմ ընել թէ տղաքները մեր առջևէն ու քա-ջէն վռնտելն ալ պէտք է մէկ մեծ ամօթ մը ու ցաւ մը համարուի անոնց։ Դու իսկ պատժելու ժամանակդ պէտք է ըսես թէ "որ-չափ ցաւ կ'ըզգամ որ կ'ստիպուիս դքեզ պատ-ժելու, ինձմէ զատ եղբայրներդ ալ սատիկ կը վշտանան, քանզի ինչպէս կարենան ու-րախ ըլլալ երբ տեսնեն որ իրենց փոքրիկ ընկե-րութեան սովորական անդամներէն մէկը տրըտում ու խոռոչ է"։

Երբէք պէտք չէ մեր տղայքը պատժենք անանկ բաներու համար, զոր դիպուածով ու առանց մտածելու կ'ընեն. միայն պէտք է ջնջ-րենք իրատենք որ ուրիշ անգամ ըրած բաները նոյն ուշադիր ըլլան. ու խոհեմ շարժին։ Շատերը կան որ աւելի շատ տհաճութիւն կը ցուցընեն զաւակներուն, երբ ակամայ և դիպուածով պնակը կը կոտրեն, հանդերձնին կը պատռեն կամ կ'աղտոտեն, քան թէ երբ սոսկալի յանցանք կ'ընեն և կամ իրենց եղբայրը հետ խիստ կը վարուին։ Մինչ ասով մեզի հաճելի եղած բաները մեր տղայոց բարկին աւելի նախապատիւ դասած չենք համարիր. և կրնանք յուսալ որ այս կերպով մեր տղայքը պիտի առաջնորդենք լաւ մը իրենք զիրենք կա-ռավարելու կամ բարին չարէն զատելու և ո-րոշելու։

Ծնողաց գլխաւոր նպատակն է իրենց տը-ղան ուղղել երբ պակասութիւն մ'ընէ. այս պարագայիս մէջ ինչպէս նաև զանոնք հնա-զանդ ընելու մէջ ամեն բանէ յառաջ սա երկու բանին շատ ուշադիր ըլլալու են, այսինքն չթողուլ տղայքը որ հեռանին իրենց կամայն ու հակմանց՝ քան հաճոյից, և խոչըն-դոտել անոնց յաւակնութիւն սպառնալէ, որ չիարձնեն թէ ինչ որ ալ ընեն, իրենց ծնողաց ըստ հաճելի չպիտի ըլլան երբէք։ Այս երկու չարիքներէն առաջինը, ծնողաց՝ տղայոց վրայ տկար, անհաստատ և անկարգ իշխանութիւն մը բանեցնելէն յառաջ կուգայ. երկրորդն ալ չափազանց անհաչտութենէ ու խստութե-նէ։ Պէտք է, սիրելի քոյր իմ, որ տղայք հնազանդութիւնը իրենց պարտք մը ճանչնան, իրենց բարեօգտը համար. և իրենց հակում-ներն ու կամքը զսպեն ու մերժումի դիմա-նան։ Այլ միւս կողմանէ ալ տղոյն անհնա-զանդութիւնը ուշադրութեամբ ըլլայ, և պատրաստ՝ որ և իցէ անմեղ զանազանութիւն վայելելու, ու տղան վստահութիւն ունենայ։

Ողջ եր։ Քոյր քո։

* * *

Տարբերութիւն Լիակատար ծխոյ և պարտուց-ութեան Հռովմէական Ազգի ի ծխոյ և յարտուց-ութենէ Լուսաւորչական Աղանդաւոր Հիւսէյ-ի

Այս Տարբերութիւնը Թէոդոսիոս Աա-ենց Ազգին պատուական ամաթերթին մէջ հրատարակուած էր. Տփխոսը Կ-ոնի պատ-ուական ամաթերթին ալ նոյնը իր էջերուն մէջ հրատարակած ըլլալով, մենք ալ անկէ համա-ռօտելով, պէտք եղած մասը այժմ կը հրատա-րակենք։

Սակայն յօդուածը ընթերցողները պիտի տեսնեն որ Աասիոց Ազգին աշակերտի ու վարդա-պետի մէջ տրամախօսութեան մը ձևով Հռո-մէական Հայոց Հիւսէղեցական ծէսերը ու ա-րարողութիւնները կը նկարագրէ։

Այս նկարագրութիւնը իրեն շարժառիթ ունեցած է Վաւոնդ Ալիշանեանի մէկ յօդուածը, որ Վենետիկի Բազմավէպին մէջ հրատարակած՝ սա սկզբունքը կը քարոզէ եղեր թէ "մենք Հռոմայ յարելով դեռ Հայ ենք, Հայկական ծէսերը, արարողութիւնները և սովորութիւնները անխախտ պահած ենք. և թէ անոնք որ Հռոմայ յարելէ կը վախնան, աղգայնութեան վտանգ ենթադրելով, թող տեսնեն որ ինչպէս սխալ ու անհեթեթ է իրենց կարծիքը"։ Վաւոնդ այս մտօք հրա-տէր կը կարդայ համազգայնոց որ երթան Հռո-մայ գիրկն խնան. առանց երկնչելու. տղ պային ամեն յատկութիւնները և սովորու-թիւնները անխախտ ու անարատ կրնան պա-հել ըսելով։

Սակայն Աասիոց Ազգին այս գրութիւնը բոլորովին կը ջնջէ. յայտնապէս կը ցուցնէ թէ Լուսաւորչական Հայոց մեծ վտանգ կ'ըլլայ, եթէ խառնուելով երկուքին Հռոմայ յարին, և ապագայ ցանելու համար նոյն իսկ Միխիթա-րեան Վաւոնդին՝ այնքան ազգային յատկու-թիւնից նախանձայուզութիւն ցուցցրած վի-ճակին մէջ բուն իսկ մայրենի եկեղեցւոյ ծէսե-րէն և արարողութիւններէն զգալի և մեծ տարբերութիւններ ունենալնին կը թուէ։

Ձեմք գիտեր թէ Վաւոնդ պատասխա-նած է արդեօք. թէ չէ, ինչպէս անոնք սո վերաբար կ'ընեն, այս անգամ ալ նայնպէս ը-ըած են, խօսել, գրել, և Հպարտանալ։ Այս գը-րութեան ինչ ըլլալուն ընթերցողք կրնան վը-կայել։

Իսկ մենք որ ի վաղուց այս կարծեաց վրայ հաստատուած ենք, և ազգային միութիւն ևս

Թագրուած ժամանակներու մէջ ալ՝ այս մի-ութեան անհնարութիւնը յայտնապէս բա-ցատրած է. և թէ առանց Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հարազատ զա-ւակ ըլլալու՝ ազգային յատկութիւններով պարծելու և վերջապէս Հայութեան կամ Հայ ըլլալու նշան ցուցընելը գժուարին հա-մարած ենք, և գրեթէ ազգայնութեան կո-րստեան վտանգ. հիմա այս առթիւս կը հր-ատարակենք այն Տարբերութիւնները, մեր բարեմիտ ընթերցողներուն աւելի բացայայտ ընելու համար որ մեր կարծիքը, ինչպէս որ բոլոր արդի ճշմարիտ ազգասիրաց կարծիքն ալ է, աւելի օրինաւոր և հիմնաւոր է. քան թէ անոնց ընթացքը՝ որ Հռոմայ յարելով ազգա-յնութիւն պահել կ'երազեն, կամ ազգայնու-թեան վտանգ չեն ենթադրեր, և Հայոցմէ աւելի Հայ ենք կ'աղաղակեն. մինչդեռ Հա-յութեան նշանները և յատկութիւնները, ծէսերը և սովորութիւնները վերցնելով և փո-փոխելով, օր մը իրենց զաւակներն ու թոռ-նները Հայութեան անունը գուցէ չգիտի տան:

Հաստատուելով և ամրապնդելով մենք մեր կարծեաց մէջ կ'ըսենք, և միշտ պիտի ը-սենք. "արտաքոյ Հայաստանեայց Առաք-չական ուղղափառ եկեղեցւոյ չկայ Հայու-թիւն, քանի որ ազգութեան կապերնիս և կենդանացուցիչ տարրնիս Կրօնքնիս է." ուստի ան որ իր մայրենի եկեղեցին կ'ուրանայ, և մինչև անգամ անխղճաբար հերետիկոս կ'ան-ուանէ զայն, ինչ անուն կ'ունենայ...:

Կը փափաքիմ և ուխտիւք կը խնդրենք որ մխութիւն ըսուած ամենուս սեղչալի բանը Առաջս չգլաղցնէ, չէ թէ այն կերպով, ինչպէս որ մեր Հռոմէական եղբայրները կ'ե-րազեն. այլ ինչպէս որ բոլոր Առաքելա-բուղխ հա-յրապատ զաւակներս և ճշմարիտ ազգասէրք կը խնդրենք. իրենց մայրենի եկեղեցւոյն ազգ պահպանութիւնը ուրացող և անդգուշաբար կամ Հռոմի արբանեկից թելադրութեանց անսալով մեղմէ բաժնուող և զմեզ հերետիկոս անուանող եղբարց աչքերնին բացուի օր մը, տեսնեն ճշմարտութիւնը, զգան իրենց մոլո-րութիւնը և հերձուածողութիւնը, և մեզմէ գոչելով գառնան ի ծոց մայրենի Եկեղեցւոյն. որ պատրաստ է իրեն դիմողները սիրով և ու-րախութեան արտասուօք ընդունելու և գըգ-ուելու: Ընդհք կ'ընենք որ Առաջս այս ու-րախալի օրը տեսնելու արժանի ընէ զմեզ:

Ինաւասիկ Առեղծ Աղ-ներին հրատարակած ազգերու-թեան մեկ մասը:

Հ. Ի՞նչ կըսէք, Հայր սուրբ, միթէ Առ-խիթարեանք Հայաստանեայց եկեղեցւոյ ա-մէն ծէսերն ալ անկորուստ և անխաւեն չէ՞ն պահեր:

Վ. Ամէնը. ոչ, մեր ծէսերուն մէկ մասը միայն կը պահեն. այն ևս գրեթէ այն կերպով ինչպէս որ մեր ժամանակը շատ հայեր իրենց պահքը կը պահեն. ...

Հ. Ուրեմն ֆռանկական ծէսերը կը խառ-նեն եկեղեցական արարողութեանց մէջ:

Վ. Այո, և խիստ շատ, թէպէտ և ոչ այնչափ որքան որ խառնած ու խառնակած են Իզմիրու Յ ահկեցիները, Պօլսոյ հռովմէական-ները, Լեհաստանի և Խրիմու կաթոլիկները, Ջմռերնանի և Թիֆլիզու փոքրիկները, Լիբա-նանու կրօնաւորները և Վենետկի Առխիթա-ռեաններ:

Հ. Բացէք խնդրեմ, Հայր սուրբ, թէ գլխաւորապէս մեր որ ծէսերը փոփոխեր են Առխիթարեանք:

Վ. Որ մէկն ըսեմ, եղբայր, — առ այժմ մէկ քանին միայն յիշատակեմ՝ որքան որ այս վայրկենիս միտքս կուգան աչքով տեսածնե-րես: Բայց այժմէն գիտցիր որ միտքս այն փո-փոխութիւններուն պատճառներն ու հետե-ւանքները քննել չէ. այն ուրիշ տեղի խնդիր է. պէտ միայն ցուցընել կ'ուզեմ թէ Առխիթա-րեանք չեն կրնար ըսել ճշմարտութեամբ՝ ինչ-պէս որ ԿՊԱՐԾՒՆ ՍՏՈՒԹԵԱՄԲ թէ իրենք ազգային ծէսերը կը պահեն:

Մեր սուրբ պատարագի արարողութիւններէն սկսիմք. որ եկեղեցական ծէսերուն գլխաւոր-ները կը համարուին ամենուն ազգաց մէջ:

Թիւ պատարագ կը մատուցանեն, որ հան-դիսաւոր պատարագին հոմանուշականն է:

Անհնոյն ժամանակին մէկ եկեղեցւոյ պէտ եւայլ խորանները վրայ զատ զատ քահանայք մէկ մէկ սպասաւորներով պատարագ կը մա-տուցանեն:

Անհնոյն սեղանին վրայ մէկ օրուան մէջ հինգ վեց պատարագ կ'ընեն հետզհետէ:

Ողջ հայոց ամէն օրերն ևս պատարագ կը մատուցանեն:

Ամէն քահանայից վրայ պարտք դրած են որ ամէն օր պատարագ մատուցանեն:

Պատարագի նշխարը լատինացւոց նշխարի ձևովն ու բարակութեամբը և խմորովը կ'ընեն:

Ասոր, այսինքն ժողովրդեան բաժնուելու նշխարն ևս լատինացւոց նշխարին նման բան մը կ'ընեն:

Նշխարը Թարմ չեն հաներ ի սեղան. այլ ամսով պահածն ալ կգործածեն պատարագի:

Ժողովրդեան տրվելու ճաշակը քահանային նշխարէն չէն ըներ, այլ բուն լսարնացուց մանրը մանրիկներ կը սրբագործեն և զանոնք կուտան ամէն հաղորդուողին զատ զատ տառից տաբրը արեան մէջ թաթախելու։

Խաժակին մէջ ջուր կը խառնեն։

Հաւատամքին մէջ տաբրը Լուսաւորչին գրած բացատրութիւնը, "Յայնժամ յետ քան նե Հօր" դաբրա կը ձգեն, և տեղը կ'ասելով նեն այս խօսքը, "Նախ քան զամենայն յաւիտեանս"։

Հաւատամքին մէջ "Նոյն ինքն ի բնութեն Հօր" ըսելու տեղը կ'ըսեն, "Նոյն ինքն համագոյակից Հօր"։

Հաւատամքին մէջ Հոգւոյն սրբոյ համար կ'ասելցնեն այս խօսքը. "Որ ի Հօրէ և յՈրդւոյ բղխի"։

Պատարագի տառն "հողաթափ" չհագնելով, այլ կօշիկ կամ մուճակ, վերարերութեան առաջ չեն հաներ ոտքերնին։

Վերաբերութեան տառն դպիրները չեն ջոքիր։

Աղաւնի երգին մէջ "Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Որ էն Ըստուած ոտտ բանք մեցաւ" ըսելու տեղը կ'ըսեն, "Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Որ էն Ըստուած ոտտ բազմեցաւ"։

Նոյն երգին մէջէն այս երկու տողը դուրս կը ձգեն, "Ուրախ լերկնից ու անձն եղիր, Համբոյր յօդ լըրման տուաւ"։

"Առէք կերէքէն" անմիջապէս առաջ եզած քահանայական աղօթքին այս խօսքը "Ընեալ զհայն" ևայլն, կը փոխեն. "Ընե յարարչադործ ձեռս իւր" ըսելու տեղը կ'ըսեն, և ի պատուական ձեռս իւր"։

"Որդի Ըստուծոյ" երգին ժամանակը, քահանային ըսելու աղօթքին այն նշանաւոր "և խորհրդաւոր խօսքը, "Որով զհայս օրհնեալ մարմին ձշմարտապէս արարեր", կը փոխեն ու տեղը կ'ըսեն "արարեր"։

Քահանային յիշատակութեանց աղօթքին մէջէն դուրս կը ձգեն այս խօսքերս "զնախահարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս"։

Պատարագին մէջ սրբազան կաթողիկոսին անունը յիշատակելու տեղը կ'ըսեն, "Ընդառաքելոց սրբոցն պահն մեր զտեր Պետրոս շնորհեցեալ մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարգապետութեամբ"։ — Նոյնպէս Պապին անունը կը յիշեն "Ըստացուքին" մէջ, և անդաստան օրհնելու տեղն կըսեն "Ըրևմտեան կողմն աշխարհիս, վեհապետութիւն սրբազան Պապին Պիոսի, և Թագաւորութիւն քրիստոնէից"։

Սրբագործեալ նշխարը չեն թաթախեր արեան մէջ, և յետոյ ջուր մուռ չեն բաժներ։ Պատարագի տեղն ժամանակ ժամանակ ձեռքի զանգակ կը զարնեն քան ըստ նշանացուց։ Շատ մը ուրիշ փոփոխական մանր արարողութիւններ, եղանակներ և չարժմունքներ կը խառնեն պատարագի հանդիսին մէջ, որ այս տեղ յիշատակելը երկար կը լինի։

Շարունակելի

Աղջիկ մեծ ու գաւալի կորուստ մ'ունի ըստ։ Ամերիկացի Պէյլէրեան Յակոբ էֆէնտին երկու շաբթի ընդունելու փիլերը յանկարծական մահուամբ իր մանկանացուկ ընթացքը կիսեց։

Այս գոյժը խոյն տարածուելով, ամէն նուն սիրտը մորմոքեց, և Ս. Օրակի ուրբաթ Թիւնը դառնութեամբ խառնեց։

Ընդունելոյն յուղարկաւորութեան արթուն հանդիսը հետևեալ օրը կատարուելով, մարմինը բերուեցաւ մեծ ուշիզ հանդիսիս Այր Նիկողեցին, ուր գիշերը ծնոտով, հետևեալ օրը երեքշաբթի դարձեալ մեծ փառաւորութեամբ Գումքափուի դուրսի Ս. Յարութիւն Նիկողեցին տարուելով, հոն ամփոփուեցաւ։

Խուռն և անթիւ բազմութիւն մը յուղարկաւորութեան հանդիսին ընկերակցած էր։ ըռութիւն մը, գաւ և հառաչանք պատած կր զամէնքը. և այնպիսի բարերար անձի մը այսպէս անակնկալ մահուանը վրայ ի սուգ հաւմակած էին։

Բարեյիշատակ Ընդուցեալը իր բնաձիր յաջողակութեամբը այս բարձր աստիճանին հասնելով, մինչև առաջին կարգի պատուաւոր սեղանաւորաց կարգն անցաւ, Տէրութեան և Ազգին առջև մեծ վարկ և համարում ունէր. ինք բարեսիրտ և առատաձեռն ըլլալով, բազմաթիւ անձինք անմխիթար չէր Թողուր, տառապելոյն օգնութեան հասնելով հաճոյք մը կ'ըզգար. Ազգին օգտակար ծառայութիւն մատուցանողաց մէջ նշանաւոր տեղ մը բռնե

նած էր, և Ս. Էկեղեցւոյ պայծառութեանը և վարժարանաց յառաջադիմութեանը բանիւ և արգեամբ նպաստամատոյց ըլլալէ չէր դադրեր։

Ընտիկ հաղուագիւտ յատկութիւններով զարդարուած անձի մը մահուանը վրայ խրատուելիք ունինք ցաւելու. և միայն մէկ մխիթարութիւն մը կրնանք ունենալ երբ անոր արժանաւոր զաւակը իր հօրը բարեմտութեանց ժառանգորդ ըլլալով, իր բարեյիշատակ հօրը տեղը բռնէ, և հայրենական տունը ու պարագայն միևնոյն և աւելի պայծառութեան մէջ պահէ։ Կը յուսանք որ այս մխիթարութիւնը պիտի ունենանք. վասն զի Ազգիս համար միշտ բարերարող մեծ գերդաստաններուն թուոյն առաւելութիւնը իրարէ կ'ուզենք. անոնք միշտ օգտակար են Ազգին, և միշտ նեցուկ և ապաւէն՝ տառապեալ ազգայնոց։

ՊԱՏՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կեդրոնական մետուկի Գանձապահ մեծապատիւ Մոմճեան Ակրտիչ աղան ինչպէս որ յայտնի է, նախորդ Բազ. ժողովին օրովը Տնտեսական խորհրդոյ անդամոց մեկնումն կողմէն ամբաստանութեան ներքև ինկած ըլլալուն՝ այն ժամանակ այս ամբաստանութեանց քննութիւնը Տնտեսական խորհրդոյ յանձնուելէն ետև՝ ըստ որում այնու հետև Տնտեսական խորհուրդին և Ընդհանուր Ազգային ժողովին իրարանցման վիճակի մէջ և Մոմճեանի խնդիրը կարծ ձգելին, ապրիլ Բազ. ժողովը Յանձնաժողով մը կազմեց և այս գործին քննութիւնը անոր յանձնեց։ Այս Յանձնաժողովը իր քննութիւնը շարունակելուս առեն, Տնտեսական խորհուրդը իր ամբաղձութիւնը գտաւ և պաշտօնը վարել սկսաւ։ Նոր վրայ Բազ. ժողովը դարձեալ խնդիրը Տնտեսական խորհուրդին դարձուց, քանի որ անոր էութեան կը վերաբերէր այն։ Տնտեսական խորհուրդը՝ յատկապէս սահմանուած Բազ. ժողովոյ և Ընդհանուր Ազգային ժողովոյ քանի մը անդամոց խորհրդակցութեամբը թէ առաջուց եղած և թէ ետքէն Յանձնաժողովին ըրած քննութեանց արդիւնքը աչքէ անցնելով՝ այս անգամ իր տեղեկագիրը մատոյց Բազ. ժողովին։ Ետև այնմ արժան դատեցաւ ի պաշտօնէ յայտնել հասարակութեան թէ Գանձապահ Մոմճեան Ակրտիչ աղայի տոմարակալութիւնը, որուն կերպը թէև անկասկած՝ բայց բնաւ խարդախութիւն մը արտայայտած չէ, թէ անոր դէմ եղած ամբաստանութիւնները անտեղի և անհիմն են. թէ անոր հաշուեւոյժարները ժամանակին գանուող ժողովականներէն վաւերացեալ չեն միայն, թէ այն կանոնաւոր և վաւերացեալ տուժարակալութեան օրինակը՝ որ Սահմանադրութենէն առաջ Ազգ. ժողովներուն և խորհուրդներուն և ոչ մէկուն մէջ տեսնուած բան չէ, անիրաւութիւն է պահանջել միևնակ գանձապահ Մոմճեան Ակրտիչ աղայի տոմարներուն մէջ, և թէ վերջապէս գանձապահ Ակրտիչ աղան իր պաշտօնը շարունակ ամենայն հաւատարմութեամբ կատարած է և թէ նա բոլորովին անպարտ է և անմեղ։

30 Մարտ 1865

Պատրիարքարան Հայոց

Կ. Պոլիս

Կեդրոնական մետուկի գանձապահ Մեծապատիւ Ակրտիչ աղա Մոմճեանի համար 8–9 ամիս յառաջ յայտնապէս գրած ըլլալով թէ անոր վրայ եղած ամբաստանութիւնն անհիմն է, անտեղի է, զրպարտութիւն է, հիմա ուրախ սրտիւ ներկայ Պաշտօնական Օրանութեամբ կը հրատարակենք, որ մեր ըսածները լիովին կ'ըսուած և կը հաստատէ։

Մինչև ցարդ գիտնալով որ արդէն Ընդհանուր Հոգաբարձութիւն, Տնտեսական խորհուրդ և Բազ. ժողով, ամէնքն ալ Մոմճեանի նկատմամբ խարդախութեան կասկած մը անգամ ունեցած չեն, և թէ անոր տեսութիւնը բնաւ երբեք դաղտնութիւն մը չեն յայտներ, արդարութիւնը պաշտպանելու համար Մոմճեանի համար եղած ամբաստանութեանց անտեղի ըլլալը հրատարակած ենք. և որովհետև հակառակ կողման բերան եղող թերթեր ալ գտնուեցան, և նոյն իսկ Մոմճեանի ամբաստանողը Պ. Պէկեան ինքզինքը արդարացնելու համար հրատարակութեան դիմեր էր, սպասեցինք որ Պաշտօնական ծանուցումը հրատարակուի. ատ պիտի ըսծեր ամենուն ատրակտը, ինչպէս որ եղաւ ալ։

Կը յուսանք որ 8–9 ամիս վաղը զգուշացուց այսպիսի խնդիր մը, որ ըստ ինքեան ոչ միայն անտեղի էր, այլև կեղծ. մետուկին վնասակար։ Պ. Պէկեան Ազգին ծառայութիւն մը ընել ուզեր է, և ասկէ ալ աւելի յարմար միջոց չկրնալով ընտրել, բուսական ժամանակ Տնտեսական խորհուրդը առանց նիւթի թող

լէն զատ, մինչև անգամ պարտաւորեցուց որ նոյն Խորհուրդն իր հրաժարականը տայ, ինքն ալ նոյնպէս անդամ Տնտ. Խորհրդոյ ի միասին հրաժարելով։ Սակայն դոհ եղանք երբ Տնտ. Խորհուրդն իր հրաժարականը ետ առաւ, մինչ Պ. Պէկեան իր ամբաստանութենէն ձախորդ հետևանքներուն վրայ ուշադրութեամբ հրաժարած մնալ, և վերջապէս ինք որ Կուսէր նոյնպէս Տնտ. Խորհրդոյ անդամ ամբաստանող ըլլալ Մամճեանի, և միանգամայն դատաւոր կանգնիլ, իր ընկերները և Բազ. Ժողովը զինքը պարզ ամբաստանողն մը կարգը դրած ըլլալուն մանրամասնաբար, և գոհ որ Պ. Պէկեանի ըրածը լոկ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ է. և հիմա ալ ի պաշտօնէ հրատարակուեցաւ։

Ա. Ներսեսեանց Ամենապատիւ Հայոց Սրբազան Պատրիարք Հայրը անցեալ երեքշաբթի օր յատուկ շոգենաւով մեկնեցաւ ի Ա. Ներսեսեան. ուր ինչպես կը յուսացուի, Ա. Օծման օրը եթէ Յատուած կամի պիտի կըլլայ հասնիլ։ Նորին Սրբազնութեան ուղեկից եղան Վերապատիւ Իսահակ Եպիսկոպոս Պատրիարքական վիճակապետն Ա. Ներսեսեանց, և Ընծայապատիւ Կիրակոս Վարդապետեան միաբան Ա. Ներսեսեան։

Ներսեսեան Ա. Պատրիարքին մեկնելու օրը անթիւ բազմութիւն լցուած էր Պատրիարքարանէն մինչև Գումքափուի նաւամատոյցն եղած ճամբուն վրայ, և Գումքափուի դիմի վարժարանին 150ի չափ աշակերտները Գումքապուի դռնէն մինչև Ա. Յարութեան եկեղեցին, երկու կարգ բաժնուած, երգով ընդունելութիւն ըրին Նորին Սրբազնութեան, որ յետ ուխտ և երկրպագութիւն մատուցանելու Ա. Եկեղեցւոյն մէջ, Գումքափուի դըպրաց պատուաւոր Թաղական խորհրդոյն, և Ընծայարժան դաստուածց իր ընդունակալութիւնը մատուցանելով, մեկնեցաւ շոգենաւ երթալու։

Գեր. Իսրմեան Սկրտիչ վարդապետը որ նոյն առտուն պատրաստուած էր Վարագայ վանուց միաբան Ընծ. Յուսիկ վարդապետին հետ Խընիմիտ և անկէ Ամրամաշ երթալու, ուր Ա. Օծման օրերը պիտի անցնէր. լսելով ուղղակի Յոպպէ երթալու պատրաստուող շոգենաւը, ուղեց ինքն ալ այս պատեհաւ ուղեկցիլ Ա. Ներսեսեանց Ա. Պատրիարքին, ուստի անմիջապէս փոխեց դիտաւորութիւնը, և մեկնեցաւ նոյն շոգենաւով ի Ա. Ներսեսեան յուխտ և երկրպագութիւն տնօրինական Ա. Տեղեաց։

Հոս Ա. Ներսեսեանց տեղապահ մնաց Ընծայապատիւ Միքէոն վարդապետը. որուն խոհական և լուրջ բնաւորութիւնը, ծանօթ ըլլալով, կը յուսանք որ այս վիճակն պաշտօնը խիստ արժանաւորութեամբ վարէ։

ՍԵԲԱՍՏԻԱ

Սեբաստիայէն մեզի հասած լուրերը միշտ մխիթարական են։

Ընծանուէր Յանուց ընկերութեան աշակերտներուն թիւը օր օրի աւելնալով վայ է. ամէն կիրակի անընդհատ դաս առնելու յաճախողները 80 են աւելի են։

Ընդհանրապէս տեղւոյն առաջնորդական փոխանորդ Գեր. Պետրոս Հայր սուրբը և Ընտրեհոգևոր վանուց վանահայր Ընծայապատիւ Թորոս Հայր սուրբը և Խրիմեան Սկրտիչ վարդապետի աշակերտ Ընծ. Գևոնդ Հայր սուրբը այցելութիւն ըրեր են Ընծանուէր Յանուց ընկերութեան աշակերտաց. և համառօտ քննութեամբ մը խիստ գոհ եղեր են. և Պետրոս Հայր սուրբը համառօտ ազդու խրատական մը խօսելով, խրախուսեր է զամէնքը, ոչ միայն բանիւ այլև արգեամբ. վասն զի խոստումներ է դատապրիք կամ ուրիշ պիտոյք որ ուզուի, ցուցակաւ մը, ինք բերել տալու, և ընկերութեան նուիրելու. մինչև 10 օսմանեան լիրայի արժողութեամբ ալ լլլայ։

Գեր. Պետրոս Հայր սուրբին ցուցնցած ազգասիրական ոգւոյն համար մեծապէս շնորհակալութիւն ունենալով, կը յուսանք որ թէ իւր և թէ Գեր. Ընտրեհոգևոր Հօր և թէ ամէն Սեբաստացի ազգասիրաց քանիքը օր օրի յառաջ գիտի երթայ այս ազգօգուտ գործը։

Սեբաստիոյ Պինկէօլ գիւղին մէջ Ընծանուէր սան մը կայ Պ. Նիկողոս, ասիկա աստուածային կերպով քանի մը աշակերտաց ձրի դաս տալու կը պարապի. կը յուսանք որ քիչ օրէն այս աստուածականութիւնն ալ կը վերնայ, և տեղւոյն վարժարանին, կամ թէ որ չկայ, վարժարան ըլլալու յարմարութիւն ունեցող տեղի մը մէջ կ'ընծէ յիշեալ Պ. Նիկողոսը իր դաստուածութիւնները։

ՏՆՕՐԷՆ — ԽՄԲԱԳԻՐ
ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ